ՀՏԴ : 929:75(479.25)Բեքարյան+75(479.25)
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-115

ԴԻՄԱՆԿԱՐԸ ԱՐԱ ԲԵՔԱՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

ՇՈՒՇԱՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ*

Հայ գեղանկարիչ, գրաֆիկ, մանկավարժ, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Արա Բեքարյանի (1913-1986) ստեղծագործական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում դիմանկարները:

Սույն հոդվածում առաջին անգամ ուսումնասիրության են ենթարկվում Ա. Բեքարյանի՝ հայ արվեստի, գրականության և գիտության ականավոր գործիչների՝ 1940-1980-ական թվականների ընթացքում վրձնած դիմանկարները: Այդ հարուստ պատկերասրահը զարդարում են նկարիչներ Ալ. Օսմյորկինի, Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Վլ. Այվազյանի, գրողներ Ե. Չարենցի, Վ. Տերյանի, Վ. Բեքարյանի, Խ. Աբովյանի, կոմպոզիտոր Ալ. Սպենդիարյանի, ռեժիսոր Վ. Աճեմյանի, քանդակագործ Վ. Մելիք-Հակոբյանի և այլոց կերպարները: Վաստակաշատ նկարչի՝ հայ մտավորականների խոսուն դիմանկարներն իրենց ուրույն տեղը զբաղեցնող աշխատանքներ են հայկական կերպարվեստի պատմության մեջ:

Բանալի բառեր՝ Արա Բեքարյան, դիմանկար, գեղանկարչություն, գրաֆիկա, գիտության, գրականության և արվեստի գործիչներ, Մ. Սարյան, Ե. Չարենց:

Ներածություն

Պատկառելի է ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ, մանկավարժ Արա Բեքարյանի թողած ստեղծագործական ժառանգությունը, որի մեջ իրենց արժանի տեղն են գրավում դիմանկարները:

1940-1980-ական թվականների ընթացքում Ա. Բեքարյանը ստեղծել է շուրջ վեց տասնյակ դիմանկարչական աշխատանքներ, որոնք, սակայն, մինչ օրս լուրջ ուսումնասիրության չեն ենթարկվել: Նշենք, որ նկարիչը խուսափել է պատվերային դիմանկարներից և ձգտել է պատկերել այն մարդկանց, որոնք իրեն հոգեհարազատ են եղել՝ մտածելակերպով մոտ, անձնական հմայքով գերող: Այսպես, նրա

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, shushanik.muradyan.2020@bk.ru, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

հերոսներն են հայ մտավորականները, նրա ընտանիքի անդամները և աշխատավոր մարդիկ: Ըստ նկարչի դուստր, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Բեքարյանի՝ նկարչի այն ստեղծագործություններն են վերատպվել, որոնց նկարիչն ինքն է հավանություն տվել[1]: Նկարչի սերը դեպի հայ մարդն ու բնությունն արտացոլվում է նաև նրա դիմանկարներում:

Սույն հոդվածում մեր նպատակն է ներկայացնել Ա. Բեքարյանի՝ գիտության, գրականության և արվեստի ականավոր գործիչների դիմանկարները:

Հիմնական նյութի շարադրանք

Հավանաբար Ա. Բեքարյանի առաջին դիմանկարչական գործը իր ուսուցիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Օսմյորկինի դիմանկարն է, որը պահպանվում է նկարչի դստեր՝ նկարչուհի Սեդա Բեքարյանի հավաքածուում: Նրա կարծիքով դիմանկարը նկարվել է Լենինգրադում Իլյա Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտում Ա. Բեքարյանի ուսանելու տարիներին՝ 1932-1939 թթ.: Ա. Օսմյորկինը ստեղծագործական արվեստանոցի ղեկավար էր (1932-1947), գեղանկարչության ամբիոնի վարիչ (1932-1933):

Մեզ հայտնի հաջորդ դիմանկարը կատարվել է առաջինից յոթ տարի անց՝ 1946-ին, երբ Ա. Բեքարյանը նկարել է Վլադիմիր Այվազյանին (Ս. Բեքարյանի հավաքածու): XX դարի հայկական գրաֆիկայի նշանավոր ներկայացուցիչ Վ. Այվազյանը սովորել է Ստեփան Աղաջանյանի մոտ, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, իսկ 1967–ին ստացել ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում: Կտավն աշխուժացնում են Վ. Այվազյանի ժպտուն աչքերը: Նկարի երկրորդ տարբերակը պահվում է Վ. Այվազյանի մոտ:

1948-ին Ա. Բեքարյանը վրձնում է հայ ականավոր գրող և մանկավարժ Խաչատուր Աբովյանին: Կտավին, ցավոք սրտի, չկարողացանք ծանոթանալ, քանի որ այն վերատպված չէ, և պահպանման վայրն անհայտ է: 1950-ականներին Ա. Բեքարյանը պատկերում է անվանի ռեժիսոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Վարդան Աճեմյանին և իր հայրիկին՝ մտավորական, մանկավարժ, գրող Վաղինակ Բեքար-

[1] Անձնական զրույցից, 2022թ., օգոստոս:

յանին (Ս. Բեքարյանի հավաքածու): Նշենք, որ հայրիկի սիրելի կերպարն Ա. Բեքարյանը կերտել է նաև տարիներ անց՝ 1960-ականներին (Ս. Բեքարյանի հավաքածու):

1953 թ. նկարիչն ածուխով թղթի վրա ստեղծել է մեծանուն նկարիչ, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի գրաֆիկական դիմանկարը: «Մարտիրոս Սարյանը մեկն է նրանցից, ովքեր իրենց արվեստով աշխարհին ճանաչելի են դարձրել անզուգական գեղեցկություններով մեր երկիրը», - վկայում է Ա. Բեքարյանը Մ. Սարյանին նվիրված իր հոդվածում[2]: Նույն թվականին նկարիչը վրձնել է անվանի քանդակագործ Վաղարշակ Մելիք-Հակոբյանին: Կտավում գերիշխում է մոխրագույնը, տեղ-տեղ երևան եկող սպիտակավուն վրձնահարվածները տանջված և տխուր տեսք են հաղորդում կերպարին (Ս. Բեքարյանի հավաքածու):

1959-ին Բեքարյանն անդրադառնում է նաև սովետահայ կերպարվեստի ականավոր վարպետ, ՀՍՍՀ նկարիչ Հակոբ Կոջոյանին: 1973-ին լույս տեսած Ա. Բեքարյանի «Հակոբ Կոջոյան» հոդվածից երևում է նրա խոնարհումը Հ. Կոջոյանի տաղանդի, նրա «մոգական» վրձնի և մարդկային տեսակի առջև[3]: Նկարչի դիմանկարում Ա. Բեքարյանը փորձում է ներկայացնել նրա բարի խառնվածքը:

Արվեստաբան Մանյա Ղազարյանը գրում է. «Հակոբ Կոջոյանի դիմանկարին բնորոշ է կերպարի անբռնազբոս արտաքինի տակ թաքնված բարի ու փոքր–ինչ միամիտ բնավորություն, որն այնպես հատուկ էր արվեստագետին: Դիմանկարը դրսևորում է Կոջոյան մարդու կերպարի այն կողմերը, որոնք ի հայտ են գալիս միայն ու միայն նրա հետ երկարատև բարեկամության, հանդիպումների, մտերմիկ զրույցների ժամանակ, այսինքն՝ այն հոգեհարազատ մթնոլորտում, որ բազմիցս առիթներ է ունեցել գտնվելու նրա տաղանդի երկրպագու Արա Բեքարյանը»[4]: Կապտա-կարմրավուն ֆոնը դիտողի ուշադրու-

---

[2] **Բեքարյան Ա.**, Մեծ արվեստագետն ու քաղաքացին, «Հայրենիքի ձայն», Երևան, 1970, N 8, 25 փետրվար, էջ 5:

[3] Տե՛ս **Բեքարյան Ա.,** Հակոբ Կոջոյան, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Հայաստան», 1973, էջ 167-169:

[4] **Ղազարյան Մ**., Արա Բեքարյան, Երևան, «Սովետական գրող», 1984, էջ 14:

թյունը սևեռում է դիմապատկերի վրա: Արվեստագետի դեմքը թեթև թախիծով է պատված, հայացքը մտախոհ է:

1961-ին Բեքարյանը վրձնում է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Կարապետ Ղաֆադարյանի դիմանկարը: Նկարիչն ունեցել է առանձնահատուկ վերաբերմունք հայագետի նկատմամբ, նրանց միմյանց կապել է սերը ժողովրդի, պատմության, մշակույթի հանդեպ: Հնագետ-պատմաբանի հայացքը զուսպ և խիստ է, իսկ կոլորիտը կառուցված է շագանակագույն, կարմիր և կապույտ տոների մեջ: Մ. Ղազարյանը գրում է. «Քանդակ հիշեցնող ինչ-որ բան կա Կարապետ Ղաֆադարյանի դիմանկարներում, այնքան կերպարը պլաստիկ ծեփվածք ունի և այնքան հմուտ է օգտագործված վրձնահարվածների ուժն ու ֆակտուրան»[5]: Ս. Բեքարյանի հավաքածուում պահվող այս դիմանկարը նկարիչը ներկայացրել է 1980-ին Լվովում իր անհատական ցուցահանդեսին: Նկարչի դստեր վկայությամբ դիմանկարի երկրորդ՝ «դեմքի ավելի մեղմ արտահայտությամբ» արված տարբերակը նկարիչը նվիրել է իր բնորդին[6]:

1960-ականներին Ա. Բեքարյանը երկու անգամ վրձնում է նկարիչ, քանդակագործ Արամ Ղարիբյանին: Առաջին տարբերակն ավելի պաշտոնական է, իսկ երկրորդը՝ ավելի ինտիմ, կամերային:

Ա. Բեքարյանի դիմանկարների շարքում առանձնանում են մեծ բանաստեղծ Վահան Տերյանի դիմանկարները, ում նկարիչը պատկերել է երկու անգամ՝ 1969 և 1974 թվականներին: Ա. Բեքարյանի արվեստը, դրանում տիրող տրամադրությունը կարծես համահունչ լինեն տերյանական պոեզիայի հետ, ինչը, ըստ երևույթին, առիթ հանդիսացավ ստեղծելու բանաստեղծի դիմանկարը: 1969-ի պատկերը տարբերվում է մյուս դիմանկարներից, քանի որ այստեղ Ա. Բեքարյանը Վ. Տերյանին ներկայացրել է բնության ֆոնին և ամբողջ հասակով՝ դալուկ և թախծոտ դեմքով, լուրջ և մտածկոտ հայացքով: Սակայն բնությունը ռեալիստական չէ, այլ տերյանական, անիրական, երազային, քնարական, ինչի մասին վկայում են ծառերի կապույտ ներկված բները:

Նկարչուհի Մարիամ Ասլամազյանը գրում է. «Շատ եմ սիրում

---

[5] Նույն տեղում:

[6] Անձնական զրույցից, 2022թ., սեպտեմբեր:

Վահան Տերյանի պորտրեն: Այստեղ ամեն ինչ վերին աստիճանի միասնական է, թե՛ կոլորիտը, թե՛ պեյզաժը և թե՛, իհարկե, բանաստեղծի կերպարի ընկալումը գործում են միասնաբար: Եվ երևի նույնիսկ Տերյանի քնարերգությանն անծանոթ օտարազգի դիտողն այս դիմապատկերից անվրեպ պատկերացում քաղի մեծ բանաստեղծի ու նրա պոեզիայի մասին: Շատ չեն Արա Բեքարյանի վրձնած դիմանկարները, բայց նրանցից յուրաքանչյուրը մարդկային մի հետաքրքրական ու ինքնատիպ աշխարհ է, մի փայլուն նմուշ»[7]:

1974-ին խոշոր պլանով, խիստ ընդհանրացված, ֆովիստական լուծումներով կատարված Տերյանի դիմապատկերում գերիշխող տրամադրությունը կրկին թախիծն է: Ա. Բեքարյանը ցանկանում է վերահիմաստավորել, նորովի ներկայացնել Տերյանի բանաստեղծական էությունը:

Ա. Բեքարյանի դիմանկարներն առանձնանում են ոչ միայն բարձր վարպետությամբ, այլև մարդու, բարու և գեղեցիկի հանդեպ ունեցած մեծ հավատով:

Ռուս անվանի արվեստաբան և արվեստի քննադատ Անատոլի Կանտորը գրում է. «Գեղանկարչության մեջ հազվադեպ կհանդիպես այնպիսի արտահայտիչ դեմքեր, ինչպիսիք բանաստեղծ Վահան Տերյանի, նկարիչ Հակոբ Կոջոյանի կամ դստեր՝ Սեդայի դիմանկարներն են: Առաջին հայացքից այդ դեմքերը կարծես թե թույլ, անկայուն, նույնիսկ վատառողջ տեսք ունեն: Այդ երևույթը, անկասկած, կխոչընդոտեր այդ դիմանկարներին զբաղեցնել իրենց արժանի տեղը, սակայն ուշադիր դիտելով՝ կարելի է տեսնել, որ թուլությունն ու ամաչկոտությունը չեն, որ իշխում են այդ մարդկանց վրա, ինչպես կարելի էր մտածել, տեսնելով նրանց համեստ, թաքնված ժպիտը, այլ ներքին խոր վստահությունը, հոգևոր հարստությունը, իրենց կենսական և ստեղծագործական առաքելությունը կատարելու պատրաստակամությունը»[8]:

---

[7] **Ասլամազյան Մ.,** Իմ սիրած նկարիչը, «Սովետական արվեստ», Երևան, N 8, 1984, էջ 26:

[8] **Բեքարյան Արա**: Գեղանկար: Գիրք-ալբոմ: Տեքստը՝ Կ. Միքայելյանի, Ա. Կանտորի, Վ. Հարությունյանի, Երևան, Նուշիկյան տպագրություն, 2012, էջ 13:

1971-ին Ա. Բեքարյանը նկարել է հայ մեծանուն կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Ալ. Սպենդիարյանի դիմանկարը: Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանում հանգրվանած այս նկարում գերիշխում են արևոտ և տաք գույները:

1975-ին նկարիչը վրձնում է հայ բանաստեղծ, գրող և թարգմանիչ, հրատարակիչ, ՍՍՀՄ գրողների միության անդամ Եղիշե Չարենցի պորտրեն, որն այսօր պահվում է Ե. Չարենցի տուն-թանգարանում: Նշենք, որ Բեքարյանը բանաստեղծի կերպարին անդրադառնում է մի քանի անգամ, այդ դիմանկարներն այսօր նկարչի դստեր հավաքածուում են: Խորքի գունային լուծումներով տարբեր այս դիմանկարները միավորում են դրամատիկական հնչերանգը և միևնույն կոմպոզիցիան՝ մեծ պոետի՝ խոշոր պլանով արված մուգ ակնախորշերով պրոֆիլը: 1977-1978-ին Ա. Բեքարյանը պատկերում է սիրելի կերպարը կանգնած՝ իր գրական երկերից կազմված ազդագրերի ֆոնին:

1980-ին Ա. Բեքարյանը կերտել է ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, գորգանկարիչ Հակոբ Քեշիշյանի վեհ ու խրոխտ կերպարը:

Ինչպես գրում է արվեստաբան Վ. Հարությունյանը. «Բեքարյանի ամենագունեղ ու խնդուն կտավներն իսկ հաճախ ասես «համեմված» են անտեսանելի կապտավունով, որը մեղմում է արևի ու գույների ինտենսիվությունը, չի թողնում, որ նրանք բարձր ձայնեն: Դրա համար եթե Սարյանի ու Ասլամազյանի կտավներում արևը կիզում է, Բեքարյանի մոտ զգում է, շոյում: Իսկ դրանց կողքին քիչ չեն նկարչի այն գործերը, որոնցում տիրապետող թույրերը կապույտն ու երկնագույնն են՝ իրենց բերած երազուն տրամադրությամբ»[9]:

Եզրակացություն

Իր դիմանկարներում Ա. Բեքարյանը փորձում է հաղորդել դիմանկարների հոգեբանական խորությունը՝ շեշտը դնելով նրանց ներքին տրամադրության վրա: Ա. Բեքարյանի բոլոր հերոսներին միավորում է լուրջ, մտազբաղ և կենտրոնացած հայացքը: Տարբեր է, սակայն, նկարչի ձեռագիրը: Եթե 1940-1950-ականների դիմանկարնե-

[9] Նույն տեղում, էջ 17:

ում դրսևորվում է Բեքարյանի ռեալիստական տաղանդը, ապա 1960-ականներին նա գտնում է խոշոր ընդհանրացումներով, գույնի դեկորատիվ և սիմվոլիստական մատուցմամբ աչքի ընկնող հարազատ և յուրօրինակ արտահայտչաեղանակը:

Արա Բեքարյանի վրձնած դիմանկարներից յուրաքանչյուրը մարդկային հետաքրքրական ու ինքնատիպ աշխարհ է: Բեքարյանի արվեստն ազգային է:

Հուզական վառ բնութագրերով, ազգային շեշտված տիպերով օժտված հայ մտավորականների խոսուն դիմանկարներն իրենց ուրույն տեղը զբաղեցնող աշխատանքներ են հայկական կերպարվեստի պատմության մեջ:

ПОРТРЕТ В ИСКУССТВЕ АРА БЕКАРЯНА

ШУШАНИК МУРАДЯН

В творчестве армянского художника, графика, педагога, Народного художника Армянской ССР Ара Бекаряна (1913-1986) важное место занимают портреты.

В данной статье впервые изучены портреты выдающихся деятелей армянской науки, искусства и литературы, созданные А. Бекаряном в период с 1940-х по1980-е годы. Данную галерею украшают образы художников М. Сарьяна, А. Коджояна, В. Айвазяна, писателей Е. Чаренца, В. Терьяна, В. Бекаряна, Х. Абовяна, композитора А. Спендиаряна, режиссера В. Аджемяна, скульптора В. Мелик-Акопяна и других. Красноречивые портреты армянской интеллигенции, созданные знаменитым художником, занимают особое место в истории армянской живописи.

Ключевые слова: Ара Бекарян, портрет, живопись, графика, деятели науки, искусства и литературы, М. Сарьян, Е. Чаренц.

PORTRAITURE IN THE ART OF ARA BEKARYAN

SHUSHANIK MURADYAN

In the oeuvre of the Armenian painter, graphic artist, pedagogue, People's Artist of the Armenian SSR Ara Bekaryan (1913-1986), portraits hold a special place.

The article examines for the first time the portraits of the eminent figures of Armenian science, literature and art, created by A. Bekaryan in the period

between the 1940s and 1980s. The images of the painters M. Saryan, H. Kojoyan, V. Ayvazyan, the writers Y. Charents, V. Teryan, V. Bekaryan. Kh. Abovyan, the composer A. Spendiaryan, stage director V. Ajemyan, sculptor V. Meliq-Hakobyan and others decorate this gallery. These telling portraits of Armenian intelligentsia, created by the renowned artist, took their distinctive niche in the history of Armenian visual arts.

Key words: Ara Bekaryan, portrait, painting, graphic, figures of science, art and literature, M. Saryan, Ye. Charents.